# ՀԱՐՑԱՇԱՐ

«ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔ

**Հարց 1.**
Հայեցողական լիազորությունն օրենքով վարչական մարմնին վերապահված իրավունք է՝

Ընտրելու մի քանի հնարավոր իրավաչափ լուծումներից որևէ մեկը:

*(հոդ. 6, մաս 1)*

**Հարց 2.**
Վարչական վարույթը եզրափակվում է՝

Վարչական ակտի ընդունմամբ:

*(հոդ. 20, մաս 4)*

**Հարց 3.**
Վարչական վարույթ հարուցելու հիմքերն են՝

Անձի դիմումը, բողոքը կամ վարչական մարմնի նախաձեռնությունը:

*(հոդ. 30, մաս 1)*

**Հարց 4.**
«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի իմաստով՝ վարչական ակտը, որի միջոցով վարչական մարմիններն անձանց տրամադրում են իրավունքներ կամ նրանց համար ստեղծում են այդ անձանց իրավական կամ փաստացի դրությունը բարելավող ցանկացած այլ պայման, համարվում է՝

Բարենպաստ վարչական ակտ:

*(հոդ. 53, մաս 2 «ա»)*

**Հարց 5.**
«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի իմաստով՝ վարչական ակտը, որի միջոցով վարչական մարմինները մերժում, միջամտում, ընդհուպ սահմանափակում են անձանց իրավունքների իրականացումը, որևէ պարտականություն են դնում նրանց վրա կամ ցանկացած այլ եղանակով վատթարացնում են նրանց իրավական կամ փաստացի դրությունը, համարվում է՝

Միջամտող վարչական ակտ:

*(հոդ. 53, մաս 2 «բ»)*

**Հարց 6.**
Առ ոչինչ վարչական ակտի կատարումը կամ կիրառումը՝

Առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

*(հոդ. 62, մաս 3)*

**Հարց 7.**
Իրավաչափ է այն վարչական ակտը, որն ընդունվել է՝

Օրենքի պահանջներին համապատասխան:

*(հոդ. 66, մաս 1)*

**Հարց 8.**
Վարչական ակտը կարող է բողոքարկվել՝

Վարչական կամ դատական կարգով:

*(հոդ. 70, մաս 1)*

**Հարց 9.**
Բողոքի հիման վրա իրականացվող վարչական վարույթը հարուցվում է՝

Բողոքը վարչական մարմնում մուտքագրելու օրը:

*(հոդ. 73, մաս 1)*

**Հարց 10.**
Եթե վնասը պատճառել են մեկից ավելի պատասխանատվություն կրողներ, ապա վնաս կրած անձի առջև նրանք կրում են՝

Համապարտ պատասխանատվություն:

(հոդ. 103)

**Հարց 11.**
Ոչ իրավաչափ վարչական ակտ ընդունելու հետևանքով պատճառված վնասի հատուցման չափը սահմանում է՝

Վարչական մարմինը:

*(հոդ. 110, մաս 1)*